

Հ Ա Ն Գ Ի Ս Տ
ՍՐԺԱՆԱԳՐԱՅԻՎ Տ. ՆԻԿՈԼ ԱՎԱԳ ԳԱՆԱՆԱ ԲԱՎԵՑԱՆԻ
(1879—1955)

Մայիսի 3-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, խոր ծերություն հասակում ի Տեր հանգչավ Մայր Աթոռի սիրված ու հարգված միաբան արժանապատիվ Տ. Նիկոլ (Տ. Նիկողայոս) ավագ քահանա Բավեյանը:

Հանգուցյալը ծնվել է Նոր-Բայազետում 1879 թվին: Նա իր սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում և հետագայում շարունակել Սրբավանի թեմական դըպրոցում:

Քսան տարեկան հասակում, 1899 թվականին, ընտանեկան հոգսի ծանրության տակ, նա գալիս է Թբիլիսի և աշխատում Ս. Սարգիս եկեղեցում, որպես տիրացու: Կարճ ժամանակում, այստեղ իր գեղեցիկ ձայնով, գրավում է թե՛ հոգևոր իշխանության, թե՛ քահանայության և թե՛ ժողովրդի համակրությունն ու ուշադրությունը: Նրա մանկության տարիների երազն է լինում հոգևորական դառնալ և անշահախնդիր ոգով ծառայել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն: Բայց թերի ուռումը թուլյլ չի տալիս նրան Թբիլիսի նման տեղում հոգևոր կոչում ստանալ և քահանայադործել: Հաջորդ տարիները Տ. Նիկոլի համար լինում են ինքնակրթության և վերապատրաստման աշխատանքներին նվիրված համառ ճիգի տարիներ: Ինքնակրթությամբ հաջողվում է ձեռք բերել կայուն գիտելիքներ հոգևոր ասպարեզում ծառայելու համար և վերջապես Թբիլիսիի մոտ գտնվող Լիս գյուղի եկեղեցու համար ձեռնադրվում սարկավագ:

Թբիլիսիի հասարակությունը չէր ուզում զրկվել իր քաղցրախոս խոսնակից, և ահա շուտով նա Թբիլիսի է գալիս և սպասավորում Վանք կոչված առաջնորդանիստ Մայր եկեղեցում:



1915 թվականին Թբիլիսիի առաջնորդական փոխանորդ Տ. Սփրեմ եպիսկոպոս Սուքիասյանից ձեռնադրվում է քահանա: Իր եկեղեցական երգեցողությամբ նա նվաճում է Թբիլիսիի հասարակության համակրանքն ու բարեկամությունը: Արդարև երաժշտական մեծ վայելք էր լսել նրա «Տէր, ողորմեա՛ն», մեղեդիներն ու մենեթերները: Իր քաղցր ու պարզ բնավորությամբ Տեր Նիկոլը գրավում է բոլորի սերն ու համակրանքը: Թբիլիսիի Վերա կոչված գերեզմանատան հեղեցիներա օրով դառնում է

մի ժողովրդական ուխտավայր: Ամեն կողմից գալիս են լսելու Տ. Նիկոլի անուշ ձայնը: Նրա շնորհիվ բարեկարգվում է գերեզմանատունը:

Երկար տարիներ նա պաշտոնավարել է նաև Թբիլիսիի նորակառույց Քամոյանց եկեղեցում, որը, շնորհիվ Տ. Նիկոլի երգեցողության, դառնում է Թբիլիսիի հայ հասարակության ամենահաճախվող եկեղեցիներից մեկը:

1930-ական թվականներին, Բաքվի հայ հասարակության հրավերով, Տեր Նիկոլը տեղափոխվում է Բաքու՝ քահանայադործելու տեղի մայր եկեղեցում: Այստեղ ևս նա գրավում է ընդհանուրի սերն ու համակրությունը:

Ուր էլ որ գնացել է, իր հոգևորական, նա գտնվել է իր դիրքի և աստիճանի համապատասխան բարձրության վրա և օրինակելի նախանձախնդրությամբ ծառայել է իր հօտին և Եկեղեցուն: Տ. Նիկոլը աչքի էր ընկնում հայ քահանաների մեջ հայ շարականների իմացությամբ և անթերի կատարումով: Նա եկեղեցական երգեցողության զարդն էր:

1932 թվականին Թբիլիսիում, Գեորգ արքեպիսկոպոս Չորեքյանի տեղակալության օրոք, Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի հրամանով,

հրավիրվում է Ս. Էջմիածին՝ որպես Մայր Տաճարի ավագ դասապետ: Մայր Աթոռում երկար տարիներ նա պատվով ու ձեռնհասությամբ կատարում է իր պաշտոնը մինչև իր կյանքի վերջին օրերը, երբ անողոք հիվանդությունը նրան նետեց անկողին:

Իր երկարամյա և ժողովրդանվեր պաշտոնավարության համար հանգուցյալը պարգևատրվել է ծաղկյա փիլոնով, քահանայական լանջախաշով, ավագ քահանայությունամբ, Գեորգ Զ. Կաթողիկոսը նրան պարգևատրել է վարդապետական ականակոտ լանջախաշով:

Մայիսի 6-ին կատարվեց հանգուցյալի լվացման կարգը և հուղարկավորությունը դեպի Ս. Գայանեի վանքը, իսկ հետևյալ օրը թաղումը, հոծ բազմության ներկայությամբ:

Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որը և դամբանական խոսեց՝ դրվատելով հանգուցյալի բեղմնավոր գործունեությունը հայ եկեղեցական անդաստանում:

Ձանազան քաղաքներից հանգուցյալի հարգատենների և Գերազույն Հոգևոր հորհրդի

անունով ստացվել էին հարյուրավոր ցավակցական հեռագրեր:

Հանգուցյալի մարմինը ամփոփվեց իր տիրուհու գերեզմանի կողքին, Ս. Գայանեի միաբանական գերեզմանատանը:

Տ. Նիկողի մահով Մայր Աթոռը կորցրեց իր հարազատ և հավատարիմ միաբանին, իսկ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ իր հավատավոր և օրինապահ սպասավորներից մեկին:

Ապրելով բավականին երկար և շփվելով մեր ազգային-եկեղեցական շատ դեմքերի հետ, նա նրանց կյանքից, գործունեությունից պատմում էր շատ համեղ և արժեքավոր, հաճախ անմոռանալի դեպքեր, պատմում էր ժողովրդական բառ ու բանով, համով ու հոտով, և գեղագիտական վայելք էր լսել նրան:

Բարի էր սրտով և ազնիվ, ընկերասեր, զվարճախոս. բաց էր նրա սեղանը բոլորի առաջ: Ահա թե ինչու թաղման օրը շատեր էին եկել հեռու տեղերից իրենց վերջին հարգանքը մատուցելու Տ. Նիկողին և խոնարհվելու նրա թարմ հոգակույտի առաջ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

